



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆԸ

ԶԴՋՈՒՄ

Հոգ. Կեանք

ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒԵԼՈՒ ՊԱՅ.

ՄԱՆՆԵՐԸ

ՍԱՏԱՆԱՅԻ ԵՒ ԻՐ ԾԱՌԱՆԵՐՈՒՆ ԺՈ.

ՂՈՎԸ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՅԻՆ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

Կենսագրական

ԿՈՄՍ ՅԻՆՅԷՆՏՈՐՅ

Մանկանց սիւնակ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Ազատ Թարգմ. Ն. Մ.

Թրգ. Վեր. Ն. ՓԱՓԱՋԵԱՆ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ

X X X

Թուրքերէնը ունի 8 էջ ո՛չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը չանկէ ալ կընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել տնոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:



— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

MARSEILLE (France)

Արմենիոյ դուռն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելուն
ընդ, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1932

ԹԻԻ 9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆԸ

Յիսուս Քրիստոս... Ինքզինքը խոնարհեցող ֓իւ. Բ. 8
Եղէք... Ինծմէ սորվեցէք որ հեղ եմ
ու սրտով խոնարհ Մատթ. ԺԱ. 28

«Բանբեր»ի անցեալ թիւին մէջ Յիսուսի երկ-
րային կեանքի փառաւորութիւնը զիտելու պա-
հուն, համառօտակի անդրադարձանք նաեւ Անոր
խոնարհութեանը վրայ:

Այս խոնարհութիւնը ստիպողականութեան
տակ եղած խոնարհութիւն մը չէր(1) հապաւըր-
տի ընդոժին յատկութիւն մը:

Քրիստոսի խոնարհութեան երկու բեւեռ-
ներն են՝

Ա. Անոր մարդկայնութիւնը: Մեր Տէրը մար-
դանալու համար երկու քայլեր առնելու էր: Նախ
Իր անձը ունայնացող եւ Աստուծոյ հաւասար
ըլլալու փառքը պայմանի տակ դրաւ, ի յաւի-
տենից անսահման կամքն ու փառքը, Իր էութե-
թիւնը սահմանափակեց մարմնի պատեանին
— վրանին — տակ եւ այսպէս մարդուն սահմա-
նը իջաւ եւ անոր բոլոր յատկութիւնները կա-
տարելապէս հազաւ: Յիսուս մարդացաւ: Երկ-
րորդ, Ինքը Աստուծոյ կերպարանքին տեղ ծա-
ւալի կերպարանքը հազաւ: Այսինքն ծառայի
գիրքն առաւ Աստուծոյ հանդէպ: Ո՛չ թէ Արա-
րիչ այլ արարած, ո՛չ թէ ազատ եւ հրամայող
այլ հրամանը կատարող, Աստուծոյ կամքին բո-
լորովին հպատակ եւ Անկէ կախեալ:

Անիկա մարդուն նման է հոս: Մարդս մեղ-
քին ծառայ է եւ անոր իշխանութեան տակ կը
գտնուի. մեղքը կ'իշխէ եւ կը հրամայէ անոր եւ

(1) Տես «Բանբեր» թիւ 6 «Խոնարհութիւն թէ խո-
նարհեցում» անուն կտրծ յօդուածը եւ տես այս երկու
վիճակներուն տարբերութիւնը:

անիկա աւա՛ղ, կը հնազանդի անոր ազամայ
(Հոով. Է. 15-22): Յիսուս Ինքն ալ ծառայ մը ե-
ղաւ, սակայն ծառայ արդարութեան եւ Աստու-
ծային բարձր հեղինակութեան: Այս բարձր ծա-
ռայութիւնը արդէն մարդուն բացարձակ առանձ-
նաշնորհն էր դեռ չմեղանչած, սակայն Ադամի
հպարտ անհնազանդութիւնը զինքը Աստուծոյ
ծառայութիւնէն մեղքի գերութեան փոխանակեց:
Արդ, մարդս այն օրէն մեղանչական է, այսինքն
մեղքի ծառայ: Յիսուս պահեց Իր ծառայութեան
բարձրագոյն գիրքը: Անիկա Աստուծոյ ծառան
եղաւ: Այս իմ ծառայ (Եսայ. ԽԲ. 1, 19):

Բ. Անոր մահը: Քրիստոսի խոնարհութեան
երկրորդ բեւեռը Իր մահն է: Այս մահը ոչ թէ
յիմարական արկածախնդրութեան մը յանկար-
ծական եւ անակնկալ երեւոյթն է, հապա մարդ-
կային փրկագործութեան բարձր նպատակին
համար կատարեալ զիտակցութեամբ եւ հաս-
տատակամ անձնուրաց որոշումով, ահաւոր
մահուան դառն գաւաթն ըմպելը: Աւետարանե-
րուն մէջ որոշ կը տեսնենք այդ խոնարհութեան
լուսաւոր շարունակական գիծը Բեթլեհէմէն սկս-
եալ մինչեւ Դեթսեմանի եւ Գողգոթա:

Այս կրկին խոնարհութեան մէջ է Քրիստոսի
անքննելի մեծութիւնը, որուն վրայ կը հիանայ
աշխարհ եւ որուն մէջ Աստուած Իր հաշտու-
թեան եւ թողութեան խորհուրդին հանդիպակէ-
տը գտած է հանդէպ անկեալ մարդկութեան:

Քրիստոսի խոնարհութիւնը մահուամբ Իր
զազաթնակէտին հասած է: Անիկա աւելի խո-
նարհութեան պէտք չունի: Այլ յաղթութեան դա-
րաշրջանն սկսած է Իրեն համար: Յետ այսուա՛յ
Անիկա յաւիտենական յաղթականն է մեղքի ու
մահուան եւ ամէն բանի վրայ: Յիսուսի կեանք

քին մէջ յաղթութեան առջեւէն խոնարհութիւնը գնաց. մեզի համար ալ նոյնն է ճշմարտութիւնը: Յաղթութիւնը խոնարհութենէն կը ծնանի:

Մեր Տէրը խոնարհութիւնը մարդոց համար ալ կեանքի ամենէն էական պայմաններէն մին սեպելով կ'ըսէ, «Եկէք Ինծի... Ինծմէ սորվեցէք որ հեզ եմ ու սրտով խոնարհ»: Խոնարհութիւնը մեզի համար բնական յատկութիւն մը չէ, ապա թէ ոչ մարդկութիւնը հպարտութեամբ շաղուած չէր ըլլար: Ուրեմն ինչպէ՞ս պիտի սորվինք Քրիստոսի խոնարհութիւնը: Խոնարհութիւնը խօսքով չըլլար եւ տեսնելով չսորվուիր, ապա թէ ոչ աշխարհի վրայ խոնարհներ շատ պիտի ըլլային: Խոնարհութիւնը սորվիլ պէտք է. անոր պակասը զգալով, անոր փափաքիլ եւ տիրանալ պէտք է: Յիսուս մեր օրինակն է խոնարհութեան: Ինքն է նաեւ մեր Յամբան: Երկնային բարձունքէն իջնելով մինչեւ խաչին մահոճան ալ հընազանդ ըլլալով Իր գահը բարձրացող մեր Փրկիչը ճշմարիտ ճամբան — Ինքզինքը — մեզի ցոյց կուտայ երկնային դահին հասնելու համար: Ինքն է նաեւ մեր զլուխը՝ կեդրոնը, ամբարը, աղբիւրը մեր խոնարհութեան կեանքին, որ բաւականաչափ պահեստի ոյժ ունի ամենուն համար, որոնք այդ կեանքը ապրիլ կ'ուզեն: Արդ, երբ խոնարհութեան պէտքն զգանք եւ տեսնենք մեր օրինակն ու գլուխը եզոզ Խոնարհը, հաստատ որոշումով ըսելու ենք, «Ես ոչ թէ ինծի ու մեզքին համար ապրելու եմ, հապա Աստուծոյ ու մարդկութեան համար, ինչպէս ըրաւ իմ Տէրս»: Այս որոշումը հաւատքով կ'սկսի, եւ հաւատքով կը զարգանայ ու կը գործադրուի: Այսինքն որոշում ընողը հաստատ հաւատալու է թէ մեր մէջը գործ մը սկսող Տէրը մինչեւ վերջը ի կատար պիտի հանէ:

Խոնարհութիւնը հանդերձ մը չէ, զոր կըրնանք հագնիլ բոլորական որոշումով մը, իրաւ նորապաշխար մը իր առաջին շրջանին խոնարհութեան ժամանակ մը կ'ապրի, վասնզի դեռ նոր անցած կ'ըլլայ Տէրոջ մեծ շնորհքի բովանդէս, իր մեղքերու թողութեան վստահութիւնը այնքան մեծ ուրախութիւն մը ներշնչած կ'ըլլայ որ նա հեզ ու պատրաստ է լսելու ամէն խորհուրդ եւ թելադրութիւն որ Աստուծոյ զաւկի մը բերնէն կ'ելլէ: Բայց այդ խոնարհութիւնը անբաւական է, վասնզի փորձառութիւնը ցոյց տուած է որ հոգեւոր մը իր ապաշխարութեան առաջին վառ շրջանը անցնելէն յետոյ երբ մի քիչ ինքնավստահութեան գետնին վրայ կոխած կ'ըլլայ, հոն ժամանակի ընթացքին կը տեսնէ

իր մէջ հին հպարտ մարդուն վերցուած գլուխը, այսինքն ես-ը, անհատական խորհուրդները, ես-ի կամքը, անձնական աշխատութիւններն ու զգացումները, որոնց ազդեցութենէն պիտի ազատի Աստուծոյ զաւակը հաւատքով ու հաստատ տրամադրութեամբ, համբերութեամբ Յիսուսի նայելով եւ յաղթական Քրիստոսի զօրութիւնը օրէ օր թարմ զգալով իր մէջ: Ան կ'ըսէ, «Ես կը տեսնեմ թէ Քրիստոսի խոնարհութեան կեանքը կը պակսի իմ վրայ, բայց եթէ կեանքը ապրիլ կ'ուզեմ, պէտք է որ հագնիմ զայն, ուստի կ'ուզեմ այդ կեանքը ապրիլ, Ով Տէր, օգնէ ինձ որ Քու խոնարհութիւնդ իմ հանդերձս ալ ըլլայ»:

Այս գիտակից որոշումը ոյժ մըն է իր մէջ: Երբ ինք երբեմն պակսի, կը տեսնէ թէ Տէրը շատ մօտ է իրեն եւ ցոյց կուտայ իրեն այն խաչը, որուն վրայ գամելու է այդ ես-ն ու մարմինը իր բոլոր գործերով:

Ինչ ցնծութիւն, ինչ խաղաղութիւն եւ ճոխութիւն ունի այն կեանքը ուր միայն Քրիստոս կը տիրէ: Այդ կեանքին մէջ Ս. Հոգին կը շարժի անոր ամբողջ գործարանաւորութիւնը լաւելով եւ զինքը առաջնորդելով առ ի բեղմնաւորութիւն եւ առատ պտղաբեր կեանք:

Ս. Հոգին կը փառաւորէ խոնարհ Քրիստոսը իր խոնարհ ծառային մէջ: Ծառան կրնայ վըստահիլ իր Տէրոջը, վասնզի գիտէ թէ ինչ որ Ան կ'ընէ շիտակ եւ աղէկ է (Հոսփ. Ը. 28): Գիտէ նեղութիւնը, զրկանք քաշելը, չարչարուիլն ու տառապիլը: Գիտէ թէ իր կեանքը պատառել ու զոդ պարագաները ամէնն ալ զինքը աւելի սրբեւութեամբ կ'ըլլան, որոնցմէ վեր իր Հայրը կը հսկէ եւ այս բոլորին մէջ ունի անդորրութիւն, խաղաղութիւն, ուրախութիւն փառաբանութիւն եւ յաղթութիւն Քրիստոսով:

Քաղցր է Յիսուսը որպէս խոնարհութեան ընկեր ունենալ եւ Անոր հետ բաժնել բոլոր զըրկանքներն ու ցաւերը եւ Անոր հետ յաղթող ըլլալ:

Այս կէտին հասնող Աստուծոյ զաւակը կըրնայ իր ես-ի նեխած շրջանէն դուրս ելլել ու զիտել ուրիշներն ու անոնց կարիքները: Կը փնտռէ անոնց օգտակար ըլլալ ձեռքէն եկածին չափ եւ Քրիստոսի անուշ հոտը յայտնի ընել աւանդ կողմ: Պօղոս առաքեալ այսպիսի մէկն էր:

Ինչ փառաւոր է Քրիստոսի հետեւող ըլլալ իր խոնարհութեան մէջ, Ընթերցող հետեւինք այս օրինակին, Անիկա խոնարհներուն շնորհք կուտայ:

նութեամբ, որպէսզի երջանիկ կամ սուրբ ըլլանք: Աստուած մեզի երբեք զօրութիւն չպարգեւեր, որպէսզի մենք փառաւորուինք, որ ուրիշներ մեզ յիշելով ըսեն թէ ինչ սքանչելի քարոզիչներ, ուսուցիչներ եւ հոգեւոր գործիչներ ենք: Ամէն անգամ որ սրբութեան գեղեցկութիւնը կը սկսի մեր մտքին առջեւ պատկերանալ, Սատանան ալ կ'սկսի իր սխալ շարժառիթներով մեզ փորձել եւ այս անգին օրհնութիւնները փրկողներէն շատերը զայն չեն ստանար, որովհետեւ իրենց անձնական օրհնութեանը, խաղաղութեանը, ուրախութեանը եւ օգտակարութեանը վրայ կը խորհին: Սուրբ Հոգիով լեցուած ըլլալ շատ փառաւոր բան մը կ'երեւնայ մեզի: Կը խորհինք թէ մեր կեանքը աւելի համոզիչ պիտի ըլլայ եւ խնդիրները շատ աւելի դիւրին: Կը կարծենք թէ ամէն հակառակութիւն շուտով պիտի վերցուի մեր առջեւէն: Մեր փափաքը բոլորովին անկեղծ կրնայ ըլլալ այս մասին եւ մեր մտքէն անգամ չանցնիր թէ որքան անձնասիրութիւն է այսպէս խորհիլ ու մտածել: Բայց Աստուած չկրնար իր զօրութեան լեցունութիւնը անանկներու տալ որ զայն իրենց անձնական փառասիրութեանը համար կ'ուզեն գործածել: Մեր օրհնեալ Տէրը, մեր մեծ օրինակը, ինքզինքը սրբեց որպէսզի ուրիշներն ալ սրբուին: Մտիկ ըրէք Անոր խօսքին, «Անոնց համար ես իմ անձս կը սրբեմ, որպէսզի իրենք ալ ճշմարտութիւնով սրբացած ըլլան» (Յովհ. Ժէ. 19): Անոր մեզ սրբելուն միակ նպատակը այն է որ մենք ալ ուրիշներուն օգնենք:

Կարգ մը անհատներ ալ կան որ ոչ քարոզիչ, ոչ ուսուցիչ եւ ոչ ալ հոգեւոր գործիչներ են ու միմիայն իրենց անձնական օգուտին համար կը փնտռեն այս օրհնութիւնը: Անհատներ, որ երբեք չեն վկայեր իրենց Տէրոջն ու Փրկչին համար եւ նոյնիսկ կը քննադատեն, կը դատապարտեն ու կը ծաղրեն այնպիսիները որոնց կօշիկները մաքրելու արժանի չեն, բայց կը համարձակին մասնաւոր ժողովներու երթալ եւ վերէն զօրութիւն փնտռել: Անցեալները նամակ մը ստացայ որով մէկը խորհուրդ կը հարցնէր ինձմէ իր հոգեւոր գործին համար եւ իր գտնուած տեղին մարդոց նկատմամբ հետեւեալ նկարագրութիւնը կ'ընէր: «Մարդիկ հոս իրենց հոգեւոր կեանքին խորացմանը համար եկեղեցիները կը խոնուին, մինչդեռ իրենց կրօնական կեանքը այնքան խորունկ է որ երբեք դուրս չեկեր»: Արդեօք ասոնք կարելի է նմանցնել վերը յիշուած անհատներուն: Սակայն նամակը զրոգ սիրելի անձն ալ

չէր գիտեր թէ եթէ ինք օրհնուի կ'ուզէր, Աստուծոյ Հոգին փնտռող ուրիշ անհատներու հանգէպ ունեցած իր այդ հոգիին յաղթելու եւ անկէ հրաժարելու էր:

Պէտք չէ մոռնալ թէ զօրութեան խոստումին կ'ընկերանայ վկայելու յօժարութիւնը: «Գուք զօրութիւն պիտի ստանաք... եւ իմ վկաներս պիտի ըլլաք» (Գործ. Ա. 8): Ամէն պարգևի կ'ընկերանայ բնութեան օրէնք մը որ կ'ըսէ, «Կամ գործածէ, կամ կարսնցուր»: Եթէ վերէն զօրութիւնը միայն մեր անձերուն համար կը փնտռենք մեր ջանքը բոլորովին պարապ է: Ուստի Աստուծոյ Առջեւ ծնրադրելով Սուրբ Հոգիէն խնդրենք որ ինք քննէ մեր սիրտերուն մինչեւ յատակը եւ զատէ «Վերէն զօրութիւն» ստանալու մեր շարժառիթները: Թող Անիկա սպասնէ մեր մէջ սուրբեր նկատուելու ամէն փափաք եւ հոգեւոր առաջնորդներ ըլլալու ամէն փառասիրութիւն: Մեր միակ նպատակը թող ըլլայ Յիսուսը փառաւորել որ է նաեւ Սուրբ Հոգիին նպատակը: Շատ շուտ պիտի իջնէր Սուրբ Հոգիին կրակը մեր վրայ, եթէ մեր ալ ջերմ բաղձանքն ըլլար որ Քրիստոս փառաւորուի մեր մահկանացու մարմիններուն մէջ: Պէտքէկոստէի օրը մարդիկ այդ տեսչը միայն ունէին: Սիմոն Պետրոս Սուրբ Հոգիով լեցուած կը խօսի քարոզ մը որ հազարաւորներ Քրիստոսի կ'առաջնորդէ: Քրիստոս կը փառաւորուի, ե ոչ մէկին մտքէն կ'անցնի Պետրոսը կամ անոր քարոզը զովել: «Այս ի՞նչ է, այս ի՞նչ հզօր զօրութիւն է» գոչեցին մարդիկ եւ Պետրոս պատասխանեց, «Անիկա Աստուծոյ զրկուած է Յիսուս Քրիստոսի միջոցով»: Եւ յետոյ բացատրելով կ'ըսէ, «Ինչո՞ւ աչքերնիդ տնկած մեզի կը նայիք, որպէս թէ մենք մեր զօրութիւնովը կամ բարեպաշտութիւնովը ատոր քալել տուած ըլլանք... Աստուած փառաւորեց իր Որդին Յիսուսը... եւ Անոր անուանը հաւատքով Անոր անունը հաստատեց ասիկա» (Գ. 12-16):

Ստեփանոսն ալ Հոգիով լեցուած էր, սակայն անիկա եկեղեցիին կողմէ չընտրուեցաւ քարոզելու, այլ ողորմութիւն բաժնելու, մինչ առաքեալները կ'աղօթէին ու կը քարոզէին: Անիկա յօժար եղաւ անուշադրաւ տեղի մը մէջ դործելու եւ Աստուած կարող եղաւ զայն Սուրբ Հոգիով լեցնել: Ոչ ալ ինքզինքը լոկ ողորմութիւն բաշխելու տուաւ: Անիկա վկայեց նաեւ իր լեզուով: Քարոզ մը խօսեցաւ որով Տէր Յիսուս ճիշդ նոյնքան փառաւորուեցաւ որքան որ փառաւորուած էր Պետրոսի քարոզովը հակառակ անոր որ չենք լսեր թէ մէկ անհատ իսկ դարձի ե-

կաւ, սակայն Տէրը փառաւորութեամբ, որովհետեւ Սբ. Հոգիէն ներշնչուած քարոզ մըն էր:

Ստեփանոսի քարոզը մարդոց դարձի գալուն պատճառ չեղաւ. նախավկան այդ ուրախութիւնը չվայելեց, ընդհակառակը քարկոծութեամբ, սակայն ատով ալ Տէր Յիսուս փառաւորութեամբ: «Ի՞նչ», կը գոչեա, «Ի՞նչպէս»: Մեզմէ շատեր կը խորհին թէ Տարսուսացի Սողոմ իր դարձը Ստեփանոսի կը պարտի: Այո, շիտակ է, բայց այս արդիւնքը չէր անոր քարոզին, քանզի Ստեփանոսի քարոզութիւնը ակոսներու կրճատում միայն յառաջ բերաւ, այլ Աստուծոյ փառաց լոյսին, որ անոր դէմքին վրայ տեսնուեցաւ եւ անոր Քրիստոսանման վերաբերումին՝ հալածանքի ու մարտիրոսութեան ատեն: Անոր դէմքը հրեշտակի մը նման կը փայլէր:

Քրիստոնեայ բարեկամ, անկեղծութեամբ նայէ խնդրին: Իրապէս «Վերէն գորութիւն» կը փնտռե՞ս: Շատ լաւ, փառք Աստուծոյ: Սակայն եթէ գիտնաս թէ քու գորութեամբ լեցուիլդ պիտի առաջնորդէ Աստուծոյ փառքին համար հալածուելու, նախատուելու եւ քարկոծուելու՝ նոյն քան եռանդով պիտի խնդրե՞ս Սուրբ Հոգիին գորութիւնը: Բոլորովին անկեղծ ըլլանք այս մասին: Արդեօք Սբ. Հոգիով լեցուելու մեր փափաքին մէջ տեւէ կերպով անձնասիրութիւն, շահախնդրութիւն, անձնագովութիւն կամ ինքնափառութիւն չ'սպրդիր: Պատրա՞ստ ենք ընկերային բարձրագոյն դասակարգերէ դուրս վտարուելու եւ նոյնիսկ քրիստոնեայ անունը կրողներէ ծաղրուելու: Արդեօք մեր բաղձանքը միայն ու միմիայն Տէրը փառաւորե՞լ է: Եթէ Սբ. Հոգին մեր մէջ գալով մեզի յայտնէ թէ Աստուծոյ փափաքն է զմեզ հեռաւոր երկիրներու մէջ գործածել, յօժա՞ր ենք երթալու: Եթէ մեր օրհնութեամբ լեցուելու պայմանն է կասկածելի հաճոյքներէ հրաժարիլ եւ փասակար բարեկամներու հետ մեր ունեցած յարաբերութիւնը խզել, պատրա՞ստ ենք կատարելու այդ պայմանը: Կրնա՞նք անկեղծօրէն մեր Տէրոջը երեսը նայելով ըսել՝ «Ով Տէր, տուր ինձի այդ գորութիւնը եւ ես պիտի հետեւիմ ուր որ առաջնորդես ու պիտի ընեմ ինչ որ ինձի հրամայես: Իմ միակ փափաքս է որ Դուն փառաւորուիս իմ մէջս ու իմ միջոցաւ»: Պատրա՞ստ ենք Աստուծոյ կամքէն աւելի, Անոր կամքէն պակաս, կամ Անոր կամքէն դուրս բան մը չփնտռել:

Հարաւային Անգլիոյ մէջ գտնուած գործարաններէն մէկին մէջ գործող աղջիկ մը Աստուծոմէ գորութիւն խնդրեց զայն միայն Անոր փառքին համար գործածելու պայմանով: Գործարա-

նին մէջ միակ հաւատացեալն ըլլալով հանդերձ՝ հաստատապէս Քրիստոսի կողմը բռնեց: Անոր ընկերուհիները անոր մէջ այդ գերբնական զօրութիւնը տեսնելով եւ զգալով՝ խիստ շատ հաւատակեցան անոր, սակայն յիշեալ աղջիկը վստահ ըլլալով թէ Տէրը կը փառաւորէր իր կեանքովը, հաստատուն մնաց: Վերջապէս շատ մը դառն հալածանքներէ վերջ օր մը կարգ մը աղջիկներ անոր վրայ յարձակելով, «Դուն կ'ըսես թէ Յիսուս Քրիստոսի կը հետեւիս, ուրեմն քեզ ալ խաչը պիտի հանենք», աղաղակեցին: Յետոյ զայն բռնեցին ու տարածեալ թեւերով նստարանի մը վրայ կապելով՝ անոր վրայ փայտի կտորներ բարդել սկսան: «Քրիստոսի հետ խաչը ելայ, եւ ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս»: Այդ խաչելութիւնը աղջկան պատեհութիւն տուաւ Քրիստոսը փառաւորելու: Որչափ դիւրութեամբ կրնար անոր ետը ինքզինք ցոյց տալ, արդար բարկութիւն մը երեւնալ, արժանաւոր բողոք մը բարձրանալ առ վերակացուն կամ գործարանին գլուխը գտնուողները, եւ իր անխիղճ ընկերուհիներուն փնաս մը հասցնել: Սակայն անիկա իր ստացած գորութիւնը Աստուծոյ փառքին համար գործածեց: Այնքան հեզութեամբ, քաղցրութեամբ եւ ուրախական ուրախութեամբ կրեց այս հալածանքը, որ այն բիրտ գործաւորուհիներէն մէկ քանին Քրիստոսի դարձան: Մենք ալ յօժա՞ր ենք Քրիստոսանման համբերութեամբ եւ վէրքերով զԱստուած փառաւորելու համար՝ Անոր չարչարանակից ըլլալ: Աստուած կրնա՞յ մեզի վստահելով՝ Իր Ս. Հոգին մեզի պարգեւել, մեզ Հոգիով լեցնել:

Երբ Ասիսիցի Սուրբ Ֆրանսիսկոս ծերութեան հասած էր, անոր հարցուեցաւ թէ ի՞նչպէս կարող եղած էր Աստուծոյ համար այդքան գործ տեսնել: Անիկա պատասխանեց, «Աստուած իմ ջանքերս օրհնած է թերեւս հետեւեալ պատճառաւ, Տէրը երկինքէն վար նայելով ըսաւ, «Ո՛ւր կրնամ գտնել աշխարհի ամենէն տկար, ամենէն պզտիկ եւ ամենէն անարգ մարդը», ու զիս տեսնելով շարունակեց, «Ահա, գտայ զայն, եւ իմ գործս անոր միջոցով յառաջ պիտի տանիմ, քանզի անիկա գիտնալով թէ ես զինքը կը գործածեմ միմիայն իր պզտիկ եւ աննշան ըլլալուն համար, պիտի չհպարտանայ»:

Ինձի կը թուի թէ բուն կէտը այս է: Այնքան տկա՞ր եմ որ Աստուծոյ գորութիւնը ընդունելու կարող ըլլամ: Այնքան պզտի՞կ եմ որ անուանի ըլլալ չփափաքիմ, եւ Աստուած ըլլայ ամէնը ամէն բանի մէջ: Երբ Տէր Յիսուս Քրիստոս

աշխարհ եկաւ Հայրը մեզի յայտնելու, Ինքզինքը Իր փառքէն պարպեց: Մենք ալ նոյնը ընելու ենք: Ո՛ւր էր որ դադրէինք խորհելէ թէ մենք ինչե՛ր կրնայինք ընել Աստուծոյ համար եւ մեր միակ խորհուրդն ըլլար թէ՛ Աստուած ինչե՛ր կրնար ընել մեր միջոցաւ: Երանի՛ թէ բոլորովին Անոր յանձնուէինք: Երբ հասնինք այն կէտին որ պատրաստ ըլլանք ըսելու, «Տէր, ո՛ւր որ կ'ուզես, ինչ որ կ'ուզես եւ ինչպէ՛ս որ կ'ուզես այնպէս թող ըլլայ», հեռու չենք ըլլար գորութեամբ լեցուած քրիստոնեաներ ըլլալէ:

Զարմանալի չէ՞ որ հաւատացեալ մը Աստուծոյ կամքէն վախնայ: Անիկա մեր երկնաւոր Հայրն է ու մեզ կը սիրէ: Անոր կամքը բարի ու կատարեալ է, սակայն արդեօք ընդունելի՞ ալ է (Հռով. ԺԲ. 2): Կեանքիդ ճամբորդութեանը մէջ յաջորդ քայլը տակաւին Հառած՝ որոշէ, «Ասկէ վերջ իմ բոլոր խորհուրդներուս, խօսքերուս եւ գործերուս մէջ ամենէն առաջ պիտի փնտռեմ Քրիստոսի փառքը»: Ամէն առաւօտ քու առաջին խորհուրդդ թող ըլլայ, «Ահա օր մըն ալ ինծի պարգեւուեցաւ, ամէն ինչ՝ մեծ կամ փոքր, Տէրո՛ւջը փառքին համար ընելու»: Ամէն առաւօտ քու առաջին խօսքդ թող ըլլայ, «Ինծի համար ապրիլը Քրիստոսն է»: Օրուան ընթացքին յաճախ աղօթէ, «Տէր, փառաւորէ՛ Բու անունդ»: Շարունակ ուրախութեամբ եւ վստահութեամբ յիշէ, «Տէր Յիսուս իմ միջոցով» կը փառաւորուի: Միշտ արթունք ըլլանք մեր օրհնեալ Փրկիչը փառաւորելու պատեհութիւններ գտնելու: Ո՛ւր էր թէ ժամէ ժամ մեզի ներկայացած պատեհութիւնները տեսնէինք եւ զանոնք զործածէինք: Ամէն անգամ որ յուսախաբութեան, ցաւի, նեղութեան, տրտմութեան, հակառակութեան, թշնամութեան, ծաղրանքի, ատելութեան կամ հալածանքի կը հանդիպինք, երանի թէ մեր առաջին խորհուրդն ըլլայ թէ ինչպէ՛ս կրնանք զանոնք Աստուծոյ փառքին համար գործածել: Անդադար այս հոգիով ապրէ եւ ամէն օր զարմանալի պարագաներ պիտի ներկայանան զԱյն փառաւորելու: Քեզի սովորութիւն պիտի դառնայ օրէ օր քաղցր հաղորդակցութիւն մշակել քու մէջը ապրող Քրիստոսի հետ: Պիտի հասկնաս թէ Անիկա քեզի քու ձեռքերէդ ու ոտքերէդ աւելի մօտ կը գտնուի: Ասկէ աւելի պարզ ճամբայ չի կայ ուրքը կեանք մը ապրելու: Երբոր Քրիստոսի փառքը կ'ըլլայ մեր միակ նպատակը՝ ուրախութիւն կը սեպենք կերպ կերպ փորձութիւններու մէջ իյնալ (Յակ. Ա. 2): Երբ Քրիստոսի փառքը կ'ըլլայ մեր միակ նպատակը, ուրախու-

թիւն կը սեպենք որ մարդիկ մեզ նախատեն ու հալածեն եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր խօսին Քրիստոսի պատճառաւ, քանզի այդ կերպով մեզի պատեհութիւն կը ներկայանայ մեր Տէրը փառաւորելու: Նկատա՞ծ ես թէ Տէրո՛ւջը «Երանելի»ներէն երկուքը հալածուողներուն տըրւած է: Տէրը անոնց կ'ըսէ, «Յնծացէք եւ ուրախ եղէք» (Մատթ. Ե. 10-12): Կրակոտ խառնուածքով, խայթիչ լեզուով եւ սուր պատասխաններով մէ՞կը կը ճանչցուիս, ցնծա եւ ուրախ եղիր, քանզի պատեհութիւն ունիս Քրիստոսի Հոգին ցուցնելով՝ քու բարեկամներդ զարմացնելու: Անոնք անմիջապէս պիտի հասկնան թէ քու քաղցը պատասխաններդ քեզմէ չեն, այլ քու մէջդ բնակող աստուածային գորութեան արդիւնքը:

«Ես շատ տկար եմ», կ'ըսես: Ուրեմն գոհութիւն տուր Աստուծոյ, քանզի Անիկա կ'ըսէ, «Իմ շնորհքս հերիք է քեզի, վասնզի Իմ գորութիւնս տկարութեան մէջ կը կատարուի»: Պօղոսի հետ ըսենք, «Ուստի մեծ յօժարութիւնով աւելի իմ տկարութիւններուս վրայ կը պարծենամ, որպէս զի Քրիստոսի գորութիւնը իմ վրաս հանգչի» (Բ. Կոր. ԺԲ. 9): Զարմանալի է որ Աստուած զիս զիւնքը փառաւորելու իբրեւ գործիք ընտրած է, սակայն այդպէս ըրած է եւ ընտրած է նաեւ քեզ, ուրեմն յուսախար չընենք զԱյն:

Թէպէտեւ զարմանալի կը հնչէ մեր աւանշներուն, սակայն ճշմարիտ է թէ մենք նոյն իսկ կրնանք Քրիստոսը անարգել մեր գորութեամբ լեցուելու ջանքին մէջ՝ եթէ շիտակ կերպը չգործածենք: Mr. Trumbull, Ամերիկայի Sunday School Timesի խմբագիրը, խիստ գորաւոր կերպով կը լուսաբանէ այս կէտը կարճ խմբագրականով մը:

Անիկա կ'ըսէ, «Յաղթական կեանք մը վարելու եւ ծառայելու մէջ զօրաւոր ըլլալու գաղտնիքը կը կայանայ Տէր Յիսուսի անձովը բաւականանալուն մէջ: Հայրն Աստուած կատարելապէս կը բաւականանայ Իր սիրելի Որդիովը: Աստուծոյ նպատակն է որ մենք ալ լիովին բաւականանանք մեր Փրկչովը: Աստուծոյ նուիրուած քրիստոնեայ կին մը որ Սբ. Գիրքի դասաւանդութեամբ լաւ գործ մը կը կատարէր, Ս. Հոգիով մկրտուելու փորձառութեան տիրանալու ձգտելով՝ մեծ դժգոհութեան մատնուեցաւ: Իր դժուարութիւնը քրիստոնեայ երէցի մը ներկայացուց վերջապէս: Երէցը անոր ըսաւ թէ իր նեղութեան պատճառը Յիսուս Քրիստոսով չբաւականանալն էր: Անշուշտ Տէր Յիսուսով կը բաւականանամ, բայց... Կեցիր, պատասխանեց երէցը, եթէ գուն

իրապէս գիտես թէ ի՞նչ է Տէր Յիսուսով բաւականանալ, այդ վկայութեանդ «Բայց» չկրնար յաջորդել: Դուն Յիսուսէ զուրս բան կը փնտռես: Ի՞նչ է քու ուզածդ: «Զօրութիւն կ'ուզես»: Ի՞նչ բանի համար զօրութիւն կ'ուզես: «Ս. Գրոց կարգիս օգտին համար»: Կ'ուզես որ անո՞նք ալ այս քու փնտռած փորձառութիւնդ ձեռք բերեն: «Ոչ, անոնց երբեք պիտի չխօսէի այս մասին: Իմ նըպատակս է որ անոնք անձնապէս ճանչնան Քրիստոսը»: «Զե՞ս խորհիր թէ ամենամեծ զօրութիւնը զոր պիտի կարենաս գործածել, անոնց ցուցնել է թէ ինչպէս Քրիստոս կատարելապէս գոհացում կուտայ քու բոլոր փափաքներուդ եւ պէտքերուդ, փոխանակ անոնց ցուցնելու թէ նեղուած եւ դժգոհ ես մասնաւոր փորձառութիւն մը ունեցած ըլլալուդ համար»: «Բայց ես անոնց որեւէ նեղութիւն յայտնած չեմ»: Ճիշդ այդ միջոցին անոր բարեկամունքին որ հետը եկած էր փափկօրէն անոր յիշեցուց թէ աղջիկները տեղեակ էին իր խոսոված վիճակին, քանզի իր յուզումը դէմքին վրայ դրօշմուած էր: Երբ զօրութեան պակաս մը կ'զգանք մեր մէջ, նոր փորձառութիւն մը ձեռք բերելու չձգտինք, այլ խոնարհաբար Տէրոջը յանձնենք ինքզինքնիս եւ խոստովանինք թէ մեր ամէն ուզածը Յիսուսի մէջ կը գտնուի: Անիկա կատարեալ գոհացում կուտայ:

Սուրբ Հոգիով լեցուելու մեր ջանքին մէջ շատ զգուշաւոր ըլլալու ենք: Մեր դժգոհութիւնը մեզի հանդէպ ըլլալու է եւ ոչ թէ մեր պաշտելի Տէրոջը հանդէպ: «Երբ հոգ կ'ընենք, չենք վստահիր, եւ երբ կը վստահինք, հոգ չենք ընենք»: Զօրութեամբ լեցուիլ կը նշանակէ Քրիստոսի փառքը ցուցնել: Երանի՜ թէ Յիսուսի կեանքը մեր մարմիններուն մէջ տեսանելի կերպով յայտնի ըլլայ (Բ. Կոր. Դ. 10):

(Շար.)

ՍԱՏԱՆԱՅԻ ԵՒ ԻՐ ԾԱՌԱՆԵՐՈՒՆ ԺՈՂՈՎՐ

(Թէեւ հեղինակը ձմեռնամուտի առթիւ գրած է հետեւեալը, սակայն ուրիշ ոեւէ եղանակի մէջ ալ աղօթաժողովներու ներկայ չգտնուելու պատճառները եւ անոր արգելքները որ Սատանան մեր առջեւ կը դնէ, միշտ նոյնն են):

Սատանայ.— Բա՛րեկամներ, ձմեռնամուտի առթիւ մեր ժողովի օրակարգը աղօթաժողովներն է: Դուք շատ լաւ գիտէք թէ հարցը ի՞նչ է:

Չար Ոգինւրը.— Այո՛, այո՛:

Սատանայ.— Ժամանակը շատ արագ կ'անցնի: Քրիստոնէական եկեղեցին իր ամենէն եռանդուն գործունէութեան շրջանին մէջ մտնելու վերայ է: Մինչեւ հոս, ճիշդ է թէ մենք շատ չտառապեցանք իր ձեռնարկներէն. բայց զայն կը պարտինք, ինչպէս կը յիշէք, մեր արթուն հրակողութեան զոր ի գործ դրինք ձախողեցնելու համար այս աղօթաժողովներուն պտղաբերումը, քանզի ուրիշ ոչինչ այնքան աղիտաբեր է իմ տէրութեանս համար որքան աղօթաժողովը: Պէտք է որ այս գալիք շրջանին մեր ջանքն ու արթնամտութիւնը կրկնապատկենք: Խօսքը Սամաէլի կուտամ:

Սամաէլ.— Ես բոլորովին համամիտ եմ մեր նախագահին յայտարարութեանց: Մա՛հ աղօթաժողովներուն: Բայց մեր գործը լաւ կատարելու համար պէտք է որ մեզմէ իւրաքանչիւրը իր պարտականութիւնը ընէ: Ես կ'ստանձնեմ ինչ որ ինծի կը վերաբերի, — Պակսեցնել ժողովներու ներկայ գտնուողներուն թիւը:

Ոգի մը.— Ի՞նչ, ըրած չե՞նք միթէ այն ինչ որ կարելի էր յուսալ:

Սամաէլ.— Ամենեւին: Ես յաջողեցայ ձեռք բերել որ միջին հաշուով անդամներուն 4 էն 5 ը տունը մնան: Այս թիւը այն աստիճան աւելցրնելու է որ վարիչ մասնախումբերը դրդուին՝ գալ մեր սեփական տեսակէտին եւ վերցնել աղօթաժողովները:

Ոգինւրը.— Կեցցէ՛: Շատ ընտիր, հաստատուած.

Ջայն մը.— Ինչպէ՞ս պիտի ընես:

Սամաէլ.— Ոմանց պիտի թելադրեմ թէ ժողովի տեղը իրենց խորհածէն շատ աւելի հեռու է, ուրիշներու՝ թէ ժամանակը աննպաստ է, թէ ժողովը ինքնին շատ կարեւոր չէ. պիտի ջանամ զայն մոռցնել տալ:

Դուրեւթեան Ոգին.— Կեցցէ՛, ես հոն պիտի ըլլամ քեզ երկրորդելու:

Կասկածի Ոգին.— Ես ոմանց խորհիլ պիտի տամ, «Միասին գալով աղօթելու օգտակարութիւնը ի՞նչ է»:

Անկարգութեան Ոգին.— Այնպէս պիտի ընեմ որ տուններու մէջ ընթրիքը ուշ մնայ որպէսզի վերջին պահուն արգելքները աւելնան եւ պարտաւսած տունը մնան: Աստուծոյ կամքին աւելի լաւ ծառայած ըլլալու պատրուակաւ:

Սամաէլ.— Ասանկով իմ գործս պիտի դիւրանայ: Բարեկամներս, ձեզի կը վստահիմ: Ասկէ գատ, պիտի հսկեմ ժողովի առաջնորդներուն:

վրայ: Այո, նկատած եմ թէ երբ առաջնորդողը բռնեմ, ամբողջ ժողովը ձեռքս ունիմ:

Սատանայ.— Այդ որոշ բան է: Շարունակէ՛:

Սամաէլ.— Ամէն ջանք ի գործ պիտի դնեմ որ առաջնորդողը իր ընթրիքը աճապարանօք ընէ որ մեկնելու պահուն իր կնոջ կամ զաւակներուն հետ անախորժ խնդիր մը ունենայ, որ վայրկեան մ'իսկ չ'ունենայ ընտրելու իր բընաբանը, երգերը եւ նամանաւանդ առանձնութեան մէջ փնտտելու Ս. Հոգւոյն այնքան ահաւոր զօրութիւնը: Իր միտքը զանազան խորհուրդներով պիտի լեցնեմ:

Անկարգութեան ոգին.— Ժողովարաններուն մէջ, երգարաններուն եւ նստարաններուն վրայ քիչ մը փոշի պիտի թողում, պարագային համեմատ ճրագները մխացնել պիտի տամ, հոսանք յառաջ պիտի բերեմ, կամ օդին մաքրութիւնը պիտի արգիլեմ:

Սատանայ.— Խիստ լաւ, շարունակէ՛:

Անկարգութեան ոգին.— Ամէն նախագիտչութիւն ձեռք պիտի առնեմ որպէսզի ժողովին առաջնորդողը կարելի եղածին չափ ժողովուրդէն հեռու ըլլայ, եւ ունկնդիրները ժանտախտէ բռնուածի պէս իրարմէ հեռու նստին:

Սամաէլ.— Այս մանրամասնութիւնները իրենց կարեւորութիւնը ունին, սակայն դեռ աւելի բարձր աստիճանաւ մը հսկելու ենք մեր շահերուն վրայ: Ամենէն էական բանն է որ անոնք մէկտեղ զան առանց աղօթքի հոգիի, առանց սուրախութեան, առանց եռանդի, առանց սիրոյ:

Կասկածի ոգին.— Եւ մանաւանդ առանց հաւատքի: (Առանձինն.— Աստուծոյ այն անպիտան խոստումները արդէն մեզի այնքա՛ն շփոթութիւն պատճառած են):

Սամաէլ.— Ոմանց սուտ ամէկոտութիւն մը պիտի թելադրեմ որպէսզի լուռ կենան:

Սատանայ.— Ոչ ամենուն, կը յուսամ: Ես խիստ հարկաւոր կը գտնեմ ոմանց աղօթքները, որոնք միւսները քնացնելու կը ծառայեն:

Սամաէլ.— (Քիչ մը վշտացած), Ես անոնց վերայ կը մտածէի որոնց աղօթքները օրհնաբեր են. պէտք է որ անպայման անոնց բերանները զոց մնան, այնպէս մը փակ որ բնաւ չաղօթեն, ոեւէ երգ չառաջարկեն, եւ ոեւէ համար չիշշեն:

Սատանայ.— Շատ լաւ: Բայց աւելի յառաջ երթալու է եւ ազդելու է անոնց վրայ որոնք որոշած են անպատճառ աղօթել: Զանոնք մղելու է որ երկայն եւ սովորական աղօթքներ ընեն՝ անոնցմով սպաննելու համար թանկագին ժամանակը եւ ուրիշ ներկաներու ինքնաբուրդն ներշնչ-

չումը: Իրարու յաջորդող բազմաթիւ եւ արագ աղօթքները, միշտ նշան են արթնութեան մը հոգիին. պէտք է աղօթքները փոխել ճառախօսութեանց, երբեմն ալ անձնական ակնարկութեամբ լեցուն քարոզներու, որոնք ունկնդիրները կը սրտնեղեցնեն եւ վրդովում յառաջ կը բերեն անոնց մէջ: Այդ հոգիով եղած տասը վայրկեանի աղօթք մը, վստահաբար մոռցնել պիտի տայ Աստուծոյ ներկայութիւնը: Ո՛հ, անձնասէր երկայն աղօթքները անոնց՝ սրտնք ինքզինքնին լսել տալ կ'ուզեն, ինչպէ՛ս կը ծառայեն մեր դիտաւորութեանց: Այո, շնորհիւ այս բոլոր միջոցներուն՝ վստահ ենք յաղթանակելու:

Ժողովը աւարտելու վրայ էր, երբ անդունդէն նոր ոգի մը մէջտեղ ելաւ:

Նոր ոգի մը — Յաղթանակէ՛լ: Ոչ տակաւին: Ճիշդ հիմա ձախող լուր մը իմացայ: Անոնցմէ ոմանք, մեզ յաղթել որոշած, կ'աղօթեն արդէն որպէսզի ձեռնառն ժողովները օրհնաբեր ըլլան: Ասոնք մարդիկ են որ Աստուծոյ խոստումներուն կը հաւատան եւ միտք դրած են յարատեւել մինչեւ որ մեր զօրութիւնը երեքայ: (Մտաւտանջ իրարանցում):

Սամաէլ.— Անոնք շատ փոքր թիւ մը կը կազմեն:

Կասկածի ոգին.— Ինչ հոգ եթէ անոնք կը հաւատան:

Սատանայ.— Կը հաւատա՞ն, կ'ըսէք: Ո՛հ, սիրելի բարեկամներս զիս կը վհատեցնէք: Իրենց հաւատքով անոնք կարող են ամբողջ եկեղեցին արթնցնել: Եթէ անոնք կը հաւատան, ընդդիմութիւնը անօգուտ է: Յանուն տարիներու փորձառութեան կ'ըսեմ ձեզի, ոչինչ կարող էք ընել անոնց հաւատքին դէմ (Ա. Յովհ. Ե. 4 Երբ. Ժ. 25):

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Աս կեանքիս ամբարտաւանութիւնը Հօր. մէն չէ: Ա. Յովհ. Բ. 15

Եկեղեցիին ուրիշ մէկ դիտողութիւնն ալ հրապարտութեամբ լի ըլլալն է: Ոչ մի բան այնքան հեռու է Քրիստոսի հոգիէն որքան հպարտութիւնը: Հեզութեան հակադրութիւնն է ան: Հեզութիւնը պատուիրուած է Աստուծոյ Խօսքին մէջ, բայց հպարտութիւնը դատապարտուած: Այսու հանդերձ եկեղեցին լեցուն է ամբարտաւանութեամբ: Պաշտօնէութիւնը լի է գոռոզութեամբ:

Այսօր մենք բոլորս ալ այնքան լեցուած ենք հր-
պարտութեամբ որ չենք կրնար պաշտամունք
կատարել պարզ տան մը մէջ: Սուղ և մեծածախս
տուններ, նկարուած ապակիով պատուհաններ,
թաւշեայ նստարաններ, կապերտուած տախտա-
կամած, երգեհոններ եւ մեծ ցոյցեր կ'ուզենք:
Մեր քաղաքներուն եկեղեցիներէն ոմանք այն-
քան սուղ զարդարուած են որ, բազում աղքատ-
ներ անհանգիստ կ'զգան հոն, եւ կը նախընտրեն
հեռու մնալ անկէ:

Մեր կիները հասարակ հագուստներով ե-
կեղեցի չեն կրնար երթալ. մետաքսեայ, մոդու-
սէ, մուշտակէ հագուստներ կ'ուզեն եւ եղանա-
կին յարմար գլխարկներ: Կին մը նոյն հագուս-
տով երկու անգամ չկրնար տեսնուիլ, որ մի գու-
ցէ խեղճուկ հագուած նկատուի: Ամէն եղանակի
համար գլխարկ մը պէտք է ունենայ:

Սբ. Գրքը կ'ըսէ, թէ քրիստոնեայ կիներ
պէտք չէ իրենք զիրենք զարդարեն մարգարիտ-
ներով կամ ոսկիով կամ սուղ հագուստներով,
բայց այսօր անոնք Սբ. Գրքի՝ վայելուչ հագուե-
լու, եւ երկայն մազ ունենալու մասին ըսածնե-
րուն շատ կարեւորութիւն չեն տար: Կ'ուզեն գո-
հացնել իրենց հպարտութիւնը: Կ'ուզեն ընթա-
նալ ժամանակին հետ:

Գեղադեղերու համար աւելի կը ծախսեն քան
միսիոնարութեան համար: Ամէն աղջիկ գուրս
ելլելէ առաջ փոշիով եւ գոյնով ներկուելու է:
Այս ներկը եւ փոշին՝ միացած կարճ քղանձքով
առանց թեւի հագուստին եւ կտրուած մագերուն՝
անոր գէշ կնոջ մը երեւոյթը կուտան, քանզի
ճիշդ անանկ մէկու մը պէս հագուած է:

Այս ունայնասիրութիւնը եւ հպարտութիւնը
մինչեւ անգամ պզտիկներուն փոխանցուած է:
Այս օրեր մայրեր իրենց զաւակները եկեղեցի
չեն կրնար տանիլ՝ առանց մօտայի համաձայն
հագուեցնելու:

Այս բաները եկեղեցիէն հեռու կը պահեն
բազմութիւնը աղքատներու, որոնք աղուոր հա-
գուստներ ծախու առնելու կարողութիւն չունին,
եւ իրենց հին հագուստներով ալ ուրիշներուն
տեսարան ըլլալ չեն ուզեր: Շատ աղքատ ընտա-
նիքներ կան ամէն քաղաքի մէջ, մարդիկ որոնք
զԱստուած եւ Աստուծոյ տունը կը սիրեն, բայց
չեն կրնար հոն երթալ՝ փառաւոր զգեստ չունե-
նալնուն պատճառաւ: Գրողը գիտէ ասոր ճշմար-
տութիւնը: Եթէ ես եկեղեցիի մը հովիւ ըլլայի,
(չեմ խորհիր երբեք թէ պիտի ըլլամ), ամէն մէ-
կուն պիտի ստիպէի եկեղեցին պարզ հագուստով
գալ: Պիտի դատապարտէի այն ամէն աղջիկը որ

օձ խաղցնողի պէս ներկուած եկեղեցի կուգար:
Կարճ քղանցքի, հոլանի թեւի եւ կտրուած մա-
զի երբեք չպիտի հանդուրժէի: Եթէ այս դժո-
խային բաները ժողովուրդէս արգիլելու կարող
չըլլայի՝ պիտի հրաժարէի:

Եղբայրներ, քրիստոնեայ ժողովուրդին հա-
մար առ Աստուած աղօթքս եւ իմ սրտիս փափա-
քը այսօր այն է որ անոնց աչքերուն առջեւ
վարագոյրը վերցուի եւ անոնք Տէրոջը երեսը
փնտռելու դառնան, որպէսզի անոնց յանցանք-
ները ներուին:

«Ու իմ անունովս կոչուած ժողովուրդս թէ
որ խոնարհին, ու աղօթք ընեն, ու իմ երեսս
խնդրեն եւ իրենց չար ճամբաներէն դառնան,
Ես ալ երկինքէն պիտի լսեմ, ու անոնց մեղքը
ներեմ, ու անոնց երկիրը պիտի բժշկեմ»: Բ.
Մնաց. Է. 14:

Յարաբերութիւն երկինքի հետ:—

«Ահա Տէրոջը ձեռքը փրկելէն չկարճեցաւ,
ու Անոր ազանջը լսելէն չծանրացաւ, հապա ձեր
ու ձեր Աստուծոյն մէջտեղը բաժանում ձգողը
ձեր անօրէնութիւնները եղան, եւ ձեր մեղքերը
Անոր երեսը ձեզմէ ծածկեցին որ չլսէ» (Եսայ.
Ծ/Թ. 1, 2):

Այս յօդուածաշարքին յանձն առած նիւթը
պէտք է նաեւ պարփակէ մաս մը աղօթքի հա-
մար: Ուեւ անհատի կամ եկեղեցիի զօրութիւնը
կը չափուի՝ իր Աստուծոյ մօտենալու կարողու-
թիւնով: Եթէ վերէն չտրուի, եկեղեցին զօրու-
թիւն չունի: Եթէ քրիստոնեան վերէն չստանայ,
անհաւատէն աւելի զօրութիւն չունի: Արդ, ա-
ղօթքը այն խողովակն է որու մէջէն այս ոյժը
կը հոսի: Աղօթքը յարմարապէս նմանցուած է
պարանի մը որ, ելեքտրական շարժիչը կը միաց-
նէ զօրութեան մարտկոցին: Անհատը կամ եկե-
ղեցին շարժիչն (motor) է, Աստուած՝ զօրութեան
մարտկոցը, եւ աղօթքը արույրէ պարանն է որ
այս երկուքը զիրար կը կապէ: Եթէ այս պարա-
նը անվթար է եւ յստակ, զօրութեան մարտկո-
ցէն դէպի շարժիչը հսկայ ոյժ մը կրնայ անցը-
նել եւ շարժիչի մէջ մեծ ոյժ յառաջ բերել,
բայց շարժիչը զօրութիւն չէ ինքնին, միայն գոր-
ծիք մըն է ոյժը փոխանցելու, քանզի անիկա
պաղ է եւ անկենդան՝ երբ զօրութեան մարտկո-
ցէն խլուի իր յարաբերութիւնը: Այնպէս ալ է
եկեղեցին, երբոր Աստուծոյ հետ կենդանի յա-
րաբերութիւն ունի, զօրութեամբ լեցուն է,
բայց պաղ եւ անկենդան է երբոր այդ յարա-
բերութիւնը խզուի: Աղօթքը այն կապակցու-
թիւնն է:

Յարաբերութիւնը ինչպէ՞ս կը կտրուի.—կարելի է որ շարժիչին և զօրութեան մարտկոցին միջեւ գտնուող կապակցութիւնը կտրուի, այն պարագային շարժիչը առանց ոյժի և լուռ կը մնայ: Արտաքին երեւոյթին նայելով կապակցութիւնը աղէկ կընայ ըլլալ եւ շարժիչը լաւ, բայց առանց ոյժի է:

Ասանկ ալ, մեղքի միջոցաւ, եկեղեցիին եւ Աստուծոյ միջեւ կապակցութիւնը, կենսունակ յարաբերութիւնը կընայ կտրուիլ. այդ պարագային եկեղեցին առանց ոյժի է: Որքան որ գիտեմ, քրիստոնեան Աստուծմէ կտրող միայն մէկ բան կայ, որ մեղքն է: Եսայի կ'ըսէ թէ, Աստուծոյ ձեռքը չկարճեցաւ որ չը փրկէ, ոչ ալ Իր ականջը ծանրացաւ որ չլսէ, բայց ձեր անօրէնութիւնները ձեր ու ձեր Աստուծոյն միջեւ բաժանում ձգած են եւ ձեր մեղքերը Անոր երեսը ձեզմէ կը ծածկեն որ Ինք չլսէ: Կրկին կը կարդանք Առակաց գիրքին մէջ թէ, «Ան որ օրէնքը մտիկ ընելէն ետ կը դարձնէ իր ականջը, անոր աղօթքը անգամ պիղծ է»: Նաեւ կը լսենք թէ Տէրը կ'ըսէ, «Ու Իմ անունովս կոչուած ժողովուրդս թէ որ խոնարհին, ու աղօթք ընեն, ու Իմ երեսս խնդրեն, եւ իրենց չար ճամբաներէն դառնան, ես ալ երկինքէն պիտի լսեմ, ու անոնց մեղքը ներեմ, ու անոնց երկիրը պիտի բժշկեմ»: Եւ Պետրոս մեզի կ'ըսէ, թէ «Ինչու որ Տէրոջը աչքերը արգարներուն վրայ են, ու Իր ականջները անոնց աղօթքին, բայց Տէրոջը երեսը չարագործներուն վրայ է»: Խնդիրը մօտէն սերտելով կը տեսնենք թէ, մեղքը ընդունելի աղօթքին ամենամեծ արգելքն է: Որչափ որ մեր սիրտերը եւ կեանքերը ազատ են մեղաց բիծերէն, այնչափ զօրութիւն կ'ստանանք Աստուծմէ:

Ո՛ւրկէ եկաւ Եղիային զօրութիւն՝ աղօթքով երկինքը գոցելու որ անձրեւ չգայ երեք ու կէս տարի, որբեւարիին տղան ողջնցնելու եւ սեղանին վրայ երկինքէն կրակ իջեցնելու: Ինչպէ՞ս եղաւ որ Պետրոս ծնրադրեց եւ աղօթեց ու մեռելը կենդանացաւ: Պօղոս եւ Շիդա ինչպէ՞ս կարողացան աղօթելով բանտին դռները բանալու:

Հնազանդութիւնը ինչպէ՞ս կը ծնի.— Վերի հարցումներուն հասարակ պատասխանն է թէ, անոնք այս բաները ըրին հաւատքով: Շիտակ է, հաւատքով էր: Ամէն ազգու աղօթքին մէջ հաւատք ըլլալու է: Սակայն հնազանդութիւնը ինչպէ՞ս կը ծնի: Անհնազանդութիւնը հաւատքը կը քանդէ: Այսպէս է մեր երկրային յարաբերութիւններուն մէջ, այսպէս է նաեւ մեր երկնայինին մէջ: Բացատրեմ: Մանուկ մը իր մօր

շատ հնազանդ եղած է, ջանացած է անոր աչքին հաճելի բաներ ընել: Ուստի կընայ մեծ վրտահոլութեամբ (կամ հաւատքով) գալ իր մօր՝ անկէ բան մը խնդրելու: Կընայ մինչեւ անգամ կատարեալ վստահութեամբ պահանջել. չէ՞ որ հնազանդ մանուկ մը եղած է: Բայց եսթադրենք որ մանուկը չար է, չէ՞ս գիտեր որ ան չկրնար գալ նոյն վստահութեամբ, չկրնար վստահութիւն ունենալ քանզի գիտէ որ մայրը հաճած չէ իր ընթացքին ուստի խնդրուածը տալու տրամադիր չէ: Մեր երկնաւոր Հայրն ալ Իր զաւակներուն հետ այսպէս կը վարուի: Եթէ մենք հնազանդինք Իրեն՝ աւելի մեծ հաւատքով կընանք խնդրել Իրմէն, եւ մեր խնդրածը ընդունելու մեծ հաւանականութիւն կայ: Ասիկա է Յովհաննէսի սորվեցնել ուզածը, երբ ան կ'ըսէ, «Եւ ինչ որ խնդրենք, կ'առնենք Անկէ, ինչու որ Իր պատուիրանքները կը պահենք, եւ Իր առջին հաճոյ եղած բաները կ'ընենք»:

Անհնազանդութեան պատճառաւ օրհնութիւնը կ'արգիլուի.— Ճամբորդ մը որ Իր տունէն բաւական հեռու կը գտնուէր, երկու աղուորիկ զաւակներ ունէր զոր շատ կը սիրէր: Տուն վերադարձած ատեն անոնց երկու տոպրակ խնձոր բերաւ: Տան առջեւի բակին մէջ խաղցող երկու մանուկները տեսան որ հայրերնին կուգայ, վագեցին զայն գիմաւորելու: Փոքրիկ աղջիկը բաւական թեթեւաշարժ ըլլալուն, տղան անցնելու վրայ էր. երբ ան զայս տեսաւ՝ իր ոտքը դէմը երկնցուց եւ ձգեց իր պզտիկ քոյրը: Հայրը տեսաւ այս դէպքը եւ տղուն ըսաւ, «Տղաս, խնձոր չես կրնար ունենալ»: Հիմա տղան ինչո՞ւ չէր կրնար խնձոր ունենալ: Հայրը իրենց համար ծախու չառա՞ւ զանոնք: Եւ իր փոքրիկ տղան չէ՞ր սիրեր այլեւս: Այո՛, հայրը խնձորը ծախու առած էր որչափ աղջկան, այնչափ նաեւ տղուն համար: Այո՛, հայրը գեռ կը սիրէր իր պզտիկ տղան, բայց այդ միջադէպին համար՝ հակառակ իր կամքին, խնձոր չտուաւ անոր: Այսպէս ալ մեր երկնաւոր Հայրը Իր զաւակներուն համար մեծ օրհնութիւններ ամբարած է եւ կ'ողջ զանոնք տալ անոնց, բայց անոնց անհնազանդութեան պատճառաւ նա կ'արգիլուի:

Ըսի թէ հաւատքը յառաջ կուգայ հնազանդութենէն: Սուրբ Գիրքը կ'ըսէ թէ հաւատքը կուգայ լսելէն: Կա՞յ հակասութիւն մը հոս: Այս պարագային տակ ի՞նչ կը նշանակէ լսելը: Ուրիշ ոչինչ եթէ ոչ մտիկ ընել: Այն համարին մէջ լսել բառին նշանակութիւնը ճիշդ նոյնն է, ինչպէս սա համարին մէջ: «Ան որ օրէնքը մտիկ ընե-

լէն ետ կը դարձնէ իր ականջը, անոր աղօթքը անգամ պիղծ է»: Արդ, լսել, այս պարագային տակ կը նշանակէ մտիկ ընել, կամ օրէնքին հրահանգիլ: «Հաւատքը լսելէն է» ըսող համարին կապակից համարներէն կը հասկցուի, թէ նոյն նշանակութիւնը կցուած է հոս, քանզի զրոյցը կը շարունակէ ըսելով, «Բոլոր օրը իմ ձեռքս երկնցուցի անհնազանդ ու հակառակող ժողովուրդի մը»: Այսինքն ժողովուրդը մը որ մտիկ չըներ, ժողովուրդը մը որ չուզեր հնազանդիլ: Յիրաւի հնազանդութիւնը հաւատք կը ծնի:

Թերաֆաւատութիւնը Աստուծոյ ժողովուրդին մէջ. — Ինչ ողբալի է որ այսքան քիչ հաւատք կը գտնուի Աստուծոյ ժողովուրդին մէջ: Բայց կարելի՞ է ատկէ աւելի բան ակնկալել քանի որ իր Տէրոջ հնազանդելու տեղ՝ Աստուծոյ ժողովուրդը կ'առաջնորդուի նորաձեւութեան, հաճոյքի եւ մամոնայի աստուածներէն, քանի որ Աստուծոյ պաշտօնեաները այնպէս տկարացած են սր Քրիստոսէ աւելի մարդոցմէ կը վախճան եւ այդ պատճառաւ Աստուծոյ բոլոր կամքը չեն հրապարակեր իր ժողովուրդին՝ որ լեցուած է ամբարտաւանութեամբ եւ գոռոզութեամբ:

Քրիստոնեայ բարեկամ, եթէ կ'ուզես հաւատքդ աւելցնել՝ աւելցուր նախ աստուածային կամքին հնազանդութիւնդ: Եթէ աղօթքիդ զօրութիւնը կ'ուզես աւելցնել՝ աւելցուր հնազանդութիւնդ: Երանի՞ թէ Աստուծոյ ժողովուրդը ամէն տեղ ինքզինք թօթափէր աշխարհէն եւ անոր աղտոտ հաճոյքներէն ու ունայնութիւններէն եւ դառնար Աստուծոյ՝ կոտրած սրտով, Անոր կամքին հրապատակելու մտադրութեամբ, ու ըլլար Անոր սեփական ժողովուրդ, քանզի իրաւամբ, «Տէրոջը աչքերը արդարեւերուն վրայ են, ու իր ականջները անոնց աղօթքին, բայց Տէրոջը երեսը չարագործներուն վրայ է» (Ա. Պետ. Գ. 14):

ՎԵՐՋ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԸ

ԳԻՐԲ ԾՆՆԴՈՅ

(Մաս Բ.)

Ծննդոց գիրքը կը պարունակէ շատ կարեւոր գիտութեանց նախագիտելիքները: Այս գանազան գիտութեանց մանրամասնութիւններն ու վերջնական հետեւանքները չեն երեւիր, սակայն առանց այս լոյսին կարելի չէ որեւէ բան հաս-

կընալ յետագայ գիրքերէն: Այս Գրքին բերած յայտնութիւնները կը սկսին հոն՝ ուր կը վերջանան կամ կը ձախողին մարդկային փնտռութիւնները, զի որոշ է որ մարդուն խուզարկութիւնը որոշ կէտի մը հասնելով կը կանգնի խորհրդաւոր անձանօթին առջեւ, յայնժամ ա՛լ «Գիւտը» անկարելի է եւ կը կարօտինք «Յայտնութեան»: Համառօտիւ քննենք «Ծննդոց» գիտութիւնը:

Ա. Աստուածաբանութիւն: — Գիրքը զԱստուած մեզի կը ներկայացնէ իբր միակ Արարիչը, Թագաւորը եւ փրկիչը: Այս ինքնին անմիջապէս կը փճացնէ բազմաստուածութեան եւ համաստուածութեան (polythéisme եւ panthéisme ի) նիւթապաշտ եւ սնամէջ տեսութիւնները: Այս յայտնութեան վրայ շինուած է ամբողջ քրիստոնէութիւնը. անոր դէմ կատարուած եւ զԱստուած ուրիշ կերպով ճանչնալու ունէ ձեռնարկ՝ լայն դուռ կը բանայ մարդկային անվերջ երեւակայութեան, որուն խորտ ու բորտ ճամբաները ի վերջոյ կը հասնին Աստուծոյ գոյութիւնը ժխտելու հարկադրանքին:

Բ. Ստեղծագործութիւն: — Ծննդոցը կը յայտնէ, թէ Տիեզերքը ստեղծուեցաւ Աստուծոյ կամքով եւ զործքով: Թէ խոտի շիւղէն մինչեւ ճաճանչագեղ համաստեղութիւնք ամէն բան իր ձեռքին գործն է: Ծննդոց առաջին էջը իր ոճին պարզութեամբն ու սրբութեան շունչովն, բոլոր դարերու մէջ գրաւած է մտքի եւ սրտի անթիւ մարդոց ուշն ու հիացումը: Չարմանալի է նկատել որ արդի գիտութեան լաւագոյն արդիւնքները կը հաստատեն այնքան հին էջի մը պարունակութիւնը: Արեւէն առաջ լոյսի գոյութիւնը, բոյներուն կենդանիներէն առաջ երեւնալը, կենդանեաց ստեղծագործութեան կարգը, եւ վերջապէս մարդուն ստեղծուիլը ու անկէ վերջ ո՛չ մէկ նոր ստեղծագործութիւն չըլլալը, ապշեցուցիչ կերպով կը վաւերացուին գիտութեամբ:

Գ. Մարդաբանութիւն: — Մարդը կը ներկայացուի իբր հողէն շինուած եւ Աստուծոյ շունչովը կենդանացած էակ մը: Նա դրուած է Արարիչին իշխանութեան տակ, բայց իր կարգին տէր է միւս բոլոր արարածներուն վրայ, միայն թէ պատասխանատու է Աստուծոյ: Նա ստեղծուած է բոլորովին մաքուր բարոյականով մը, կատարելապէս երջանիկ ապրելու աստուածահաճոյ սրբութեան կեանքը, իտէալ միջավայրի մը մէջ: Անօգուտ է այս իրողութենէն դուրս փնտռել մարդուն ծագումը: Չայս ընել պիտի նշանակէր իջնել բարեշրջութեան խախտու եւ յարափոփոխ տեսութիւններուն, որոնցմով շատեր կը տքնին

փաստել թէ մարդը կենդանական սաղմի մը բարձրագոյն արտադրութիւնն է եւ թէ հետեւաբար ոչինչ աւելի է քան պարզ անասուն մը: Ծննդոց լոյսին առջեւ մեզի համար բացարձակապէս անընդունելի են այս սնամէջ ենթադրութիւնները: Արդարեւ բարեշրջութիւնը հակառակ իր երկարատեւ եւ անխնայ ջանքերուն ոչ մէկ լուծում բերած է իր դրած հարցին, ու այն հետաքրքրութիւնը զոր սկիզբէն յաջողեցաւ բռնկեցնել գիտական շրջանակներու մէջ, հետզհետէ կը սառնի: Բազմաթիւ գիտուններ իրարու ետեւէ կը լքեն այս տեսութիւնները ինքզինքնին անկարելի ենթադրութիւններու եւ գիտականօրէն անվաւեր կարծիքներու լաբիւրինթոսի մը առջև գտնելով:

Դ. Ընկերաբանութիւն. — Կը տեսնենք որ մարդկային ընկերութեան առաջին շրջանակն է ընտանիքը, ամուսնութեան վրայ հիմնուած: Ազգ մը կը կազմուի ընտանիքներով, որոնք կը գիտակցին փոխ յարաբերութեան մը կարեւորութեան, Աստուծոյ իշխանութեան ներքեւ: Առանց այս հիմին, ընկերային կեանքը կ'իյնայ այն զրդուելի եւ անտանելի դրութեան մէջ, որ այսօր մասամբ կ'երեւի հոն՝ ուր համայնավարական սկզբունքները ամուսնական կապը անհարկի կը նկատեն: Ռուսիոյ մէջ այր եւ կին մը ոչ թէ ընտանիք այլ «զոյգ մը» կը կազմեն: Զաւակները կը ծնանին պետական մայրանոցի մը մէջ, կը կերակրուին մանկարանին մէջ, կը կարդան պետական դպրոցներու մէջ, ի վերջոյ դառնալու «Պետական ստացուածք» ինչպէս որ պիտի ըլլար եթէ խնդիրը ոչխարներու եւ ձիերու վրայ դառնար: Գերեզմարութիւնը չէ՞ որ ետ կուգայ ամենէն լաւ ծպտուած եւ ընդվզեցնող ձկնի տակ:

Ե. Ազգաբանութիւն: — Ծննդոցը կ'արձանագրէ նաեւ որ Բաբելոնի աշտարակին առթիւ ազգերու միութիւնը խորտակուեցաւ, որ հակաստուածութեան միացեալ փորձ մըն էր: Ուրեմն առանց Աստուծոյ, ինքնաբաւութեան գիտակցութեամբ՝ փորձուած ընդհանուր ազգաց միութիւն մը միշտ ձախող եւ անկարելի պիտի ըլլայ: Դարձեալ այս անկարելիութենէն ծնած են բոլոր դարերու դժբաղդութիւնները՝ մրձակցութիւն, նախանձ, ատելութիւն եւ անվերջ պատերազմներ:

Զ. Մեղքը: — Այս խորհրդաւոր հարցին շուրջ ցոյց կը տրուի թէ մեղքը կը կայանայ Աստուծոյ բարութեան չհաւատալուն եւ Աստուծոյ դէմ ապստամբելուն մէջ: Մարդը, մեղաւոր կամ մեղքի համար չէ ստեղծուած: Բնաւ: Մեղքը բա-

րիին միւս կողմը չէ՝ երբեք (նման դրամին երկու երեսներուն) ոչ ալ որեւէ կերպով յառաջդիմութեան եղանակ մը, ինչպէս ոմանք կը փորձեն հաւատացնել: Սուրբ եւ բարի Արարիչին փափաքով կամ թելադրութեամբ չէր որ մարդը մեղքի մէջ ինկաւ, ընդհակառակը Աստուած «Պիտի մեռնիս»ը ըսելով լրջօրէն ազդարարեց մարդուն մեղքէն զգուշանալ: Ապա սկիզբէն մարդը իր մէջ ոչ մէկ բնական հակում ունէր մեղանշելու: Մարդկային ազգին դժբաղդութեան պատճառը դուրսէն եկաւ: «Թշնամի մը ըրաւ զայն»: Բայց մարդը իյնալով անհաւատութեամբ եւ անհնազանդութեամբ գործակից եղաւ Ստատանային գործիքին «Օձին» եւ երկուքն ալ հաւասարապէս տուժեցին, անիծուեցան: Յայնժամ նաեւ Աստուծոյ կամքովը երեւան եկաւ խորհրդաւոր իրողութիւն մը, տառապանքը, որուն պաշտօնն էր՝ ի մէջ այլոց ցոյց տալ գործուած մեղքին ահաւոր եւ անախտ հետեւանքը:

Ը. Փրկագործութիւն: — Որոշ կը տեսնուի նաեւ որ այս ձախողութենէն յետոյ Աստուած Իր ձեռագործը բնաւ չլքեց, այլ լծուեցաւ անոր փրկութեան գործին: Ակներեւ է որ ինկած մարդը ո'չ ինքնիրմով եւ ո'չ ալ զինք կորսնցնող Ստատանայով պիտի վերականգնի, այլ Աստուծով միայն: Առանց Աստուծոյ միջամտութեան ո'չ մէկ փրկութեան կարելիութիւն կայ: Աստուած նաեւ տառապանքը պիտի գործածէր իբր կրթիչ ազդակ, որ իր խայթոցին ուժովը պիտի չափաւորէր մեղքին հակումը՝ զգուշանք արթնցնելով իր խաղաղութիւնը կողոպտող մեղքին հանդէպ եւ արծարծելով փափաք եւ յոյս նախկին երջանկութիւնը վերստանալու համար: Բայց տառապանքը ոչ մէկ առթիւ քաւարար զօրութիւն մը չունի, անոր զերը լոկ դաստիարակիչ է: Ապա, Աստուած տառապանքին կը կցէ փրկութեան խոստումը: Իրաւ է որ ըսաւ, «Յղութեան ցաւերդ խիստ պիտի շատցնեմ», բայց նաեւ յայտնեց թէ երկունքի սերունդը օձին զուլիւր պիտի ջախջախէ, փճացնելով մարդուն վրայ ունեցած իրաւասութիւնները՝ անոր բոլոր անիծեալ հետեւանքներով: Վերջապէս եւ մանաւանդ Աստուծոյ սէրէն բաժնուած չէ այս մէթոտը: Նա ինքնին մտերմօրէն կը մասնակցի մարդոց որդիներուն տառապանքին, Իր սիրտը ամէն ատեն եւ ամէն տեղ Իր անառակին կը կարեկցի: Ի վերջոյ Ան զայս ցոյց տուաւ արիւնլուծայ «Բարի Հովիւին» եւ «Վիշտերու Տէր» խաչեալին տառապանքներովը, երբ «Մեր ցաւերը վերցուց» ու «Մեր վիշտերը Իր վրայ առաւ»:

Սերուն,
վատասերուն,
վերասերուն,

Այս է Ծննդոց միջուկը: Վերասերման կամ փրկագործութեան համար Աստուած ընտրեց մարդուն գործակցութիւնը: Գործակից սերունդին ոսկեղէն գիծը կը սկսի հաւատացեալ Աբէլէն եւ կ'անցնի սրբակեաց Ենովքի եւ «Արդարութեան քարոզիչ» Նոյի վրայ: Ապա կուգայ Աբրահամը, որ իր տիտանական հաւատքով արդար սեպուեցաւ, «Աստուծոյ բարեկամ» եղաւ եւ իր անունը «Հայր բազմութեան» փոխուեցաւ: Երջանի՛կ նահապետ ընտրեալ ցեղին որմէ պիտի ծնէր Մեսիա՛ն: Իսահակ աւելի կրաւորական է, բայց Յակոբ անհանգիստ է եւ անընդհատ պայքարի մէջ մինչեւ որ կը յօժարի լքել իր բնական խորամանկութիւնը՝ միայն հաւատքի մարդ ըլլալու համար: Այս առթիւ «Հացաւ եւ շնորհք խնդրեց» ու «Խաբողը» Աստուծոյ իշխան մը եղաւ: Այս երեք կարեւոր դէմքերուն համար ալ Աստուծոյ ջանքն է զանոնք բերել այն հաւատքի դիրքին՝ ուր Իրեն կարելի էր գործել անոնց մէջ եւ անոնց համար, եւ ուր նահապետներուն կարելի էր փոխադարձաբար զիտակից յարաբերութեան մէջ մտնել Իրեն հետ:

* * *

Ուրեմն Ծննդոց գիրքը շատ կարեւոր եւ այժմէական պատգամ մ'ալ ունի: Հաւատք առ Աստուած: Քրիստոնեայ խորհող մը այսպէս կ'ըսէ, «Հաւատքը այն գերին է ուր Աստուած կրնայ Իր կամքը իրագործել մարդուն մէջ եւ որով նաեւ մարդ կը զիտակցի Անոր կամքին»:

Ո՛չ մէկ մարդ առանց նպատակի ստեղծուած է: Աստուած բոլորիս համար մէյմէկ ծրագիր ունի եւ մենք կոչուած ունինք մեր կեանքին մէջ իրականացնելու զանոնք: Առանց Խտոր մեր կեանքերը ներկայի եւ յաւիտենականութեան համար կորսուած են:

Անոնք՝ որոնք դեռ չունին վերստին ծննդեան փորձառութիւնը, որոնք դեռ Քրիստոսի վէրքերուն մէջ չեն գտած իրենց հոգւոյն բժշկութիւնը, նախ պարտին հաշտուիլ Աստուծոյ հետ: Գիտենք որ մեղքն է որ մեր եւ Աստուծոյ միջեւ բաժանում կը բերէ: Բայց խաչը վերցուցած է այդ բաժանումը, «Խաղաղութիւն ըրաւ»: Աստուծոյ բոլոր մարդոց համար ունեցած ծրագիրը այս է, Ինծի դարձէք, Ինծի դարձէք, ապաշխարեցէք, արդարը հաւատքէն պիտի ապրի, հաւատա՛ որ փրկուիս:

Առա՞ծ ես այս քայլը: Ուրեմն հաւատքի եւ

հաշտութեան գետնի վրայ ես եւ հիմա կարելի է քեզի քայլ մ'ալ նետել հաւատքով գործակցելու քու Փրկիչ Աստուծոյդ հետ: Ան Իր միջոցները ունի Իր կամքը քեզի յայտնելու: Փնտռէ զայս մտերիմ եւ յարատեւ յարաբերութեան մը մէջ, շատ յաճախ մտերիմ փսփսուքով մը կը լսուի «մեղմ ձայնը»: Զգոյշ, լաւ ուշ դիր, մի վարանիր, նետուէ Աստուծոյդ կամքին մէջ բոլորանուէր սրտով եւ բացարձակ հնազանդութեամբ մը քալէ անոր մէջ: Աստուած քու հաւատքիդ փոխան քեզի պիտի մօտենայ քեզ լաւ եւս լուսաւորելու եւ օրհնելու: Քու ազնկալութեանդ փոխան Իր կամքը և գիտութիւնը պիտի բանայ քու առջեւ, նոր եւ օրհնալի՛ր հորիզոններ, քու հնազանդութեանդ փոխան Իր շահերը պիտի փստահի քեզի, որպէսզի Իր յաղթանակին բաժնեկից ըլլաս: Ի վերջոյ, սիրելի ընթերցողս, վերջալոյսին, երբ կը նայիս օրուան աշխատութեանը վրայ, որոշ Հափով մը քեզի ցոյց պիտի տրուի թէ քու հաւատքիդ պատճառաւ «Աստուծոյ հաճոյ եղած ես եւ այս զքեզ մտցուցած է քու երկնաւոր Հօրդ անիմանալի ծրագիրներուն մէջ»:

Այս է «Աստուծոյ սպասաւորներ» ըլլալու առանձնաշնորհումը եւ այսպէս է որ մեզի կարելի է «Քրիստոսի թուղթերն ըլլալ»:

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿՈՄՍ ՅԻՆՅԷՆՏՈՐՖ

ՀԵՐՆՀՈՒԹԻ ԵՂԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻԼՆ

ԿԸ ԿԱԶՄՈՒԻ

Ճամբորդութենէն յետոյ Յինցէնտորֆ այլեւ 21 տարեկան էր եւ Հափահաս. հարկ էր որ կենաց առպարէզին մէջ նետուէր: Իր փափաքն էր Աւետարանի քարոզութեան նուիրուիլ, բայց իր ազգականները — մասնաւորաբար մեծ մայրը — այդ գործը անհամապատասխան գտաւ իր ընտանեաց ազնուական դիրքին եւ կոմսէն պահանջեցին որ իր հօր նման պետական պաշտօնեայ ըլլայ: Դարձեալ միտք բերելով Հորրորդ պատուիրանը, Յինցէնտորֆ հնազանդեցաւ եւ Տրէզտրնի արքունիքը մտաւ՝ իբր իրաւաբան խորհրդական (1721ին):

Այդ օրերուն Սաքսոնիոյ արքունիքին մէջ շատ զեղխ ու շուայտ կեանք մը կը տիրէր: Բայց Յինցէնտորֆ միտքը դրաւ չքշուիլ հոսանքէն եւ Դանիէլի նման հաւատարիմ մնալ իր Տէ-

րոջ: Շուտով ցուցուց՝ խօսքով ու գործով՝ թէ ինք
Քրիստոսի կը պատկանի և ուստի աշխարհ փոր-
ձեր ընելու չէ՝ զինքը զրաւելու համար:

Մէկ կողմէն՝ իբր պալատական դատաւոր՝
իբ պաշտօնին կը հետեւէր հաւատարմօրէն եւ
կը ջանար իրարու հետ հաշտեցնել երկրին հա-
կամարտ կուսակցութիւնները, իսկ միւս կողմէ
իբր Աստուծոյ զաւակ հոգեւոր գործ կ'ընէր: Հո-
գեւոր կեանքի խորացման համար հաստատեց
Ժողով մը, որ տեղի կ'ունենար կիրակի օրեր Ժա-
մը 3-7 եւ որու արտօնեալ էր ներկայ գտնուիլ
ամէն փափաքող: Ժողովը ազատ խօսակցութեան
ձեւն ունէր. կը կարգային գլուխ մը նոր կտա-
կարանէն, ոմանք բնաբանէն բղխող աս ու ան
հարցումը կ'ընէին եւ բոլորը միասին կը ջանա-
յին գտնել ճշգրիտ պատասխանները:

Այս Ժողովներու միջոցաւ Յինցէնտորֆ ա-
ւելի ծանօթացաւ խոնարհ խաւերու մարդոց, ո-
րոնք սկսան փոխադարձաբար վստահիլ իրեն եւ
սիրել ու յարգել զինք:

Ջանաց օգտակար ըլլալ նաեւ հոգեւոր գրու-
թիւններով: «Տրէգտընցի Սոկրատ» ստորագրու-
թեամբ՝ զրեթէ շաբաթը մէկ անգամ կը հրատա-
րակէր տետր մը, որու նպատակն էր իբ հայրե-
նակիցները ինքնաճանաչութեան և ճշմարիտ ու
տեւական խաղաղութեան առաջնորդել: Այս գը-
րութեանց մէջ Յինցէնտորֆ մէկ կողմէն կը ձաղ-
կէր սովորական, անջիղ քրիստոնէութիւնը եւ
այն հովիւները որոնք հացի համար կը խօսէին
եւ գործնականապէս կ'ուրանային ինչ որ ուրիշ-
ներու կը քարոզէին, իսկ միւս կողմէն կ'աշխա-
տէր ապացուցանել թէ գործնական քրիստոնէու-
թիւնը կրնայ գոհացնել ամենէն խոհուն եւ գիտ-
նական միտքը: Կ'ըսէ, «Եթէ վարդապետութիւն-
ները վսեմ իմաստութեան ծնունդ չըլլային, Սոկ-
րատ (Յինցէնտորֆ) չպիտի ընդունէր զանոնք»:

Սակայն վերոյիշեալ Ժողովներն ու հոգեւոր
գրութիւնները զեռ չէին յազեցներ Յինցէնտորֆ.
անոր սիրտը կ'այրէր հոգիներ Քրիստոսի համար
շահելու կրակովը: Իր այդ նպատակին մէջ ա-
ւելի լաւ յաջողելու գիտումով՝ Օպըրլաուզեցի
մէջ գնեց (1722ին) կալուածք մը՝ Պերթեւլտորֆ
կոչուած գիւղին քով: Ատով իրաւապէս պաշտ-
պան (փաթրոն) դարձաւ սոյն գիւղի եկեղեցւոյն:
Իսկոյն ասոր հովուութեան կանչեց պատուելի
Բօթը, որ քարոզելու հրապուրիչ ձիրքերով օժ-
տուած եւ կենդանի հաւատքով շինուած կարող
աստուածաբան մըն էր: Իսկ կալուածքին իրրեւ
վերակացու ընտրեց իրեն զաղափարակից մարդ
մը, Հայց անունով:

Քիչ ետք առաւ նաեւ ուրիշ կարեւոր քայլ
մը, ամուսնութիւն կնքեց Տօրօթէա անունով կոմ-
սուհուոյն հետ, որ իրեն նման անձնուրաց էր եւ
կեանքին նպատակ ընտրած՝ մարդիկը շահիլ
Քրիստոսի համար:

Գրեթէ ճիշդ այդ օրերուն Տէրը Յինցէնտոր-
ֆի առջեւ հանեց անակնկալ ու շատ խոստմնա-
լից գործ մը:

Աւստրիոյ կայսրը դարձեալ հալածանքի են-
թարկած էր Մորավիոյ (այժմու Չեխոսլովաքայի
մէկ նահանգին) աւետարանականները: Անոնցմէ
երեք ընտանիքներ, իրենց խղճի ազատութեան
սիրոյն համար լքեցին իրենց ստացուածքն ու
հայրենիքը և Քրիսթիան Դաւիթ անունով հիւս-
նին առաջնորդութեամբ իբր փախստական եկան
Յինցէնտորֆի կալուածքը, ուր իրենց տրամադր-
ուեցաւ Հութպերկ կոչուած տեղը՝ բնակարաններ
շինելու եւ հաստատուելու համար: Հութպերկը
ամայի, ճախճախուտ եւ փուշերով ու վայրի
թուփերով ծածկուած վայր մըն էր և չունէր աղ-
բիւրի ջուր: Փախստականները չսիրեցին զայն.
կին մը ըսաւ, «Այս անապատին մէջ ուրկէ՞ հաց
պիտի ճարենք»: Բայց վերջապէս ստիպուած էին
ատոր համար ալ փառք տալ Աստուծոյ: Արտօն-
եալ էին անտառէն իրենց ուղածին չափ ատաղձ
ստանալ, ուստի Քրիսթիան Դաւիթը կացինը
զարկաւ ծառի մը ըսելով, «Հոս ճնճուկը տուն
գտաւ եւ ծիծեռնիկը իրեն բոյն» եւ սկսան շի-
նել իրենց տունները (1722):

Այդ օրերուն Յինցէնտորֆ զեռ Տրէգտըն էր,
ոսկայն Ծնունդէն մի քանի օր առաջ իր գիւղը
եկաւ՝ իր տիկնոջ հետ միասին: Երբ իրիկունը
կառքով Հութպերկի անտառէն կ'անցնէր, լոյս
մը նշմարեց եւ իմացաւ որ հող կը գտնուէր այն
տունը, զոր մորավեան փախստականները շինած
էին: Ներս մտաւ, սիրալից խօսքերով քաջալի-
րեց զանոնք, յետոյ անոնց հետ ծնրազրելով
Աստուծոյ օրհնութիւնը խնդրեց ձեռնարկին հա-
մար:

Յաջորդ երկու տարիներու ընթացքին Մո-
րավիայէն Հութպերկ եկան նոր փախստական-
ներ, որոնք առաջիններուն նման գոհած էին ա-
մէն բան, իրենց աւետարանական հաւատքը
պահելու համար: Անոնք ալ շինեցին իրենց տու-
ները: 1624ին գաղթականները այնքան բազմա-
ցած էին որ համայնական տան մը պէտքը շատ
զգալի էր: Ուստի սրտաբուղի աղօթքով հիմը
զրին անոր, սիրտ սրտի և ձեռք ձեռքի տալով
աշխատեցան եւ Տէրոջ օգնութեամբ շուտով շի-
նեցին զայն, որ Ժողովներու յատկացուեցաւ:

Այսպէս Հոլթպերկի վրայ տնակաները հետզհետէ շատցան, որոնց թիւը հասաւ 34ի, որոնք իրենց մէջ կը պատասպարէին մօտաւորապէս 300 անձեր: Նոր գիւղը կոչուեցաւ Հերնհոլմ (Տէրոջը պաշտպանութիւնը): Գաղութին չափահասները մեծ մասամբ այնպիսի մարդիկ էին, որոնք իրենց հաւատքին համար անձնուիրաբար զոհած էին ամէն բան, եւ որոնց սիրտերը կ'եռային Քրիստոսի համար գործելու եռանդով: Ատաղձը լաւ էր, բայց դեռ անտաշ, անոնց մէջ շատ պնդապնդութիւններ ալ կային: Հարկ էր համբերատար, իմաստուն եւ սիրալիր գործունէութեան՝ զանոնք ուղղութեան բերելու, կազմակերպելու եւ միասնաբարական ընկերութիւն մը կազմելու, համայնքի մը վերածելու համար:

Ուստի Յինցէնտորֆ խորհեցաւ թէ այդ գործին համար իր ներկայութիւնը անհրաժեշտ էր, մորավեան եղբայրներու մէջ: 1726ին մեռաւ իր 87 ամեայ մեծ մայրը, որուն սիրտը չվշտացնելու համար միայն իր պետական պաշտօնին մէջ մնացած էր մինչեւ այդ տարին: Ուստի 1727ին ձգեց թագաւորին պալատը, բաժնուեցաւ Սաքսոնիոյ գեղեցիկ մայրաքաղաքէն՝ Տրէզտընէ, եւ ընտանիքով գնաց հաստատուեցաւ նախ Պերթելստորֆի եւ քիչ ետք ուղղակի Հերնհոլթի մէջ՝ գաղթականներուն քով:

Անոնց մէջ Սատանան պառակտման որոմը արդէն ցանած էր. կ'ուզէին բաժնուիլ լուտերականներէն եւ դատ եկեղեցի մը կազմել: Ոմանք այնքան լարուած էին որ իրենց լուտերական հովիւը՝ Պատ: Քոթը սուտ մարգարէ եւ իրենց պաշտպան Յինցէնտորֆը Յայտնութեան գազանը կը նկատէին: Ուրիշ մը թերեւս պիտի ցրուէր գաղութը. բայց Յինցէնտորֆ ներողամտութեան ու սիրոյ ճամբայէն գնաց եւ յաջողեցաւ իմաստուն կարգադրութիւններով շահիլ մոլորեալները:

Ինչպէս նախորդ յօդուածներուն մէջ տեսանք, անոր ձգտումն էր նոյնիսկ լուտերական ու բարեկարգեալ եկեղեցիները իրարու մօտեցնել եւ Աստուծոյ բոլոր զաւակները համեմատելի գործակցութեան մղել: Ուստի ամէն ջանք թափեց որ գաղթականները երկրորդ եկեղեցի մը չկազմեն: Սակայն միեւնոյն ատեն նկատեց որ մորավեան եղբայրները Պոհեմայէն (Չեխոսլաւիայէն) իրենց հետ բերած էին այնպիսի եկեղեցական սովորութիւն, կազմակերպութիւն եւ կանոնագրութիւն, որոնք աւելի առաքելական ու օգտակար էին քան լուտերական եկեղեցւոյնը: Ուստի անարգաբարութիւն սեպեց՝ զրկել եղբայրները իրենց այդ թանկարժէք ստացուածքներէն

զորս անոնք երկար տարիներ պահած էին՝ հակառակ իրենց դէմ տիրող հալածանքներուն:

1727ի Մայիսին Յինցէնտորֆ եւ մորավեան եղբայրները վերջապէս համաձայնութեան եզրը գտած էին: Հերնհոլթի գաղութը չպիտի բաժնուէր լուտերական եկեղեցիէն. հաղորդութիւնը, մկրտութիւնը, պսակը եւ թաղումը պիտի կատարուէին անոր հովիւներուն միջոցաւ: Սակայն մորավեան եղբայրները ազատութիւն ստացան ինքզինքնին կառավարելու այնպիսի օրէնքներով եւ սկզբունքներով, որոնք կը համապատասխանէին իրենց պէտքերուն եւ համոզումներուն: Յիշենք անոնցմէ մի քանին:—

1. Հերնհոլթի եղբայրական միութիւնը սիրով կապուած է ոեւէ եկեղեցիի պատկանող Աստուծոյ բոլոր զաւակներուն հետ: Իրեն սեփական դաւանանքը ունենալով մէկտեղ՝ չդատապարտեր այնպիսիներ, որոնք իրմէ տարբեր դաւանանք ունին:
2. Մեղաւորին արդարացման համար մարդկային գործիք անարժէք է Աստուծոյ առջեւ, բայց կատարեալ լրջութեամբ սրբացման ձգտելու է:
3. Աշխարհիկ մարդոց հետ պէտք չէ մտերիմ յարաբերութիւն ունենալ, սակայն անոնց հետ հարկ է վարուիլ յարգանքով ու քաղցրութեամբ. հեռու մնալու է անժամանակ խրատներէ եւ ուսուցումներէ:
4. Հալածանքին համբերելու է քաջութեամբ եւ արհամարհելու չէ հալածիչը:
5. Եղբայրութիւնը ներքին խրոփութենէ պահպանելու համար՝ հարկ է երէցներու առջեւ կանչել բամբասողներն ու զըրպարախնները եւ ստիպել որ խոստովանին իրենց չարախօսութիւնները:
6. Որեւէ եղբայր գործի մը ձեռնարկելու չէ առանց նախապէս լուր տալու միւսներուն:
7. Ամուսնութիւնները կնքուելու են երէցներու գիտակցութեամբ եւ նշանտուքներն ալ անոնց հաւանութիւնը առնելէ յետոյ:
8. Ով որ անուղղամիտ եւ թեթեւբարոյ վարմունք կը ցուցնէ, եւ տրուած խրատները մտիկ չընեն, եղբայրական միութենէն դուրս կը վտարուի:
9. Երէցները իրենց իշխանութիւնը զործածելու են միայն եղբայրներուն վիշտերը թեթեւցնելու եւ անոնց ուրախութիւնը աւելցընելու համար:
10. Ով որ երէցներու ժողովին առջեւ կանչուի, երթալու է առանց ընդդիմութեան: Երկու անգամ անհնազանդ գտնուողը Հոլթպերկէն հեռանալու է, եւ. եւն:

Երէցները կ'ընտրուէին բոլոր եղբայրներու բուէներովը եւ 12 հատ էին: Եղբայրական միութեան իբր նախագահ ընտրուեցաւ Յինցէնտորֆ, Երէցները եւ պաշտօնեաները ձրի կը ծառայէին:

Միութիւնը շատ կը նմանէր առաքելական դարու եկեղեցւոյն: Մասնաւոր քոյրեր ու եղբայրներ ընտրուած էին՝ խնամելու համայնքին մէջի հիւանդները: Աղքատախնամ մարմին մըն ալ կազմուեցաւ՝ օգնելու այն աղքատներուն, որոնք աշխատասէր ու խնայող ըլլալով հանդերձ թշուառութեան մատնուած էին: Գործը կը նուազատուէր ամենակարեւոր երկրաւոր պարտականութիւնը: Եղբայրները իրենց ապրուստը կը ճարէին արհեստով և քիչ ետքը սկսան գնահատուիլ իրենց շրջապատի ժողովուրդէն: Բայց առաջին տարիներուն գաղութին զրեթէ բոլոր անդամներն ալ աղքատ էին: Երէցներէն մին Մարթին Լինըր ամառ եւ ձմեռ կը քնանար չոր տախտակի մը վրայ, որպէսզի ամէն բանով հաւասար ըլլար իր աղքատ եղբայրներուն: Ինքը հացագործ էր, բայց երբ լսեց թէ ուրիշ հացագործ եղբայր մը ապրուստի դժուարութիւն ունէր, անոր սիրոյն համար ձգեց իր շահաբեր փուռը, եւ սկսաւ չոր հացը ճարել բուրդ գոյնով:

Համայնքին ամէն մէկ անձին հոգեւոր շինութեան համար մեծ հոգ կը տարուէր, երկու սեռէն ալ յարմար մարդիկ որոշուած էին, որոնց պարտականութիւնն էր այցելութիւններով օգնական ըլլալ եղբայրներուն ու քոյրերուն՝ իրենց հոգեւոր դժուարութիւններուն մէջ: Անոնք բաժնած էին համայնքը հինգէն եօթը անձէ բաղկացեալ փոքր խումբերու՝ տարիքի եւ զբաղման նայելով: Ամէն մէկ խումբը շաբաթը 1-2 անգամ աղօթաժողովներ կ'ունենար:

Կիրակի օրը Հերնհուլթի ամբողջ համայնքը Պերթելստորֆի եկեղեցին կ'երթար քարոզի: Սակայն անոնք իրենց սրահին մէջ ամէն օր առտու եւ երեկոյ կարճ ժողովներ կ'ունենային. այս՝ տեսակ մը ընտանեկան ժողով էր, քանզի Հերնհուլթի եղբայրական ամբողջ միութիւնը մէկ ընտանիքի պէս էր: Այս ժողովներու մէջ մասնաւոր հոգ կը տարուէր երգեցողութեան համար:

Այսպէս կը տեսնենք թէ Հերնհուլթի եղբայրական միութիւնը առաքելական դարու եկեղեցւոյն շատ կը նմանէր թէ՛ իր արտաքինով եւ թէ՛ ներքինով: Գաղութին բոլոր եղբայրները միացած էին մէկմէկու օգնելու եւ Տէրը փառաւորելու դիտումով: Փրկիչն շուտով վարձատրեց զանոնք՝ 1727ի Օգոստոսին, անոնց եղբայրական սիրոյ մասնաւոր հոգի մը տալով: Այդ օրը անոնք Պերթելստորֆի եկեղեցին պիտի երթային Տէրոջ Սուրբ Սեղանին մասնակցելու համար: Նախ հաւաքուեցան իրենց ժողովասրահին մէջ՝ ժողովի մը համար, ապա ճամբայ ելան: Եկեղե-

ցի հաւաքուելէ առաջ սիրոյ հոսանքը արդէն սկսաւ, բայց հաղորդութեան ատեն ան ողորդեց բոլոր եղբայրները: Եղբայրներէն մէկը իր օրագրութեան մէջ գրած է, «Այդ օրուրէն սկսեալ Հերնհուլթը Յիսուս Քրիստոսի կենդանի եկեղեցին եղաւ»:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՆԱԿ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍՍՏՔ

Անտանէլի օրեր էին: Ամուսինս անգործ էր և այն առտուն մեր ունեցած հացին վերջին կտորը կերանք: Չէի գիտեր թէ յաջորդ ճաշին համար ի՞նչ ընելու էի, ի՞նչ կերցնել այս չորս զաւակներու: Ամենէն սրտաշոյգ պահը այն ատեն էր երբ կրտսերս, որ բոլորիս սիրելին էր, եկաւ ու, «Մայրիկ, Ատա շատ անօթի է» ըսաւ:

«Բան մը չունիմ որ քեզի տամ զաւակս»: Մեծ մեծ բացաւ իր զարմացկոտ աչքերը յամբարար կրկնելով.

«Ատա շա՛տ անօթի է»:

Սիրտս պայթելու վրայ էր: Կ'զգայի թէ անպայման բան մը ընելու էի: Ուստի զաւակներովս ծունկի եկայ, արցունքով Աստուծոյ պատառ մը հաց խնդրելու: Տագնապս այնքան սաստիկ էր որ խոռված կ'արտասուէի հազիւ պատասխան մը առնելու: Բայց Ատա հաստատապէս կը վստահէր: Բնաւ Հպիտի մօտնամ թէ վստահութեան որպիսի՝ արտայայտութեամբ մը աչքերը ինծի դարձուց աղօթքէն յետոյ ըսելով,

«Հիմա թերեւս Աստուծոյ հացը կ'արելու վրայ է . . . »:

Մինչ այս, ամուսինս աստ անդ դիմած էր առանց գործ մը գտնելու: Կը վերադառնար, և արդէն տանը մօտեցած էր երբ հանդիպեցաւ քրիստոնեայ բարեկամի մը որ հարցուց,

«Այսքան ատենէ ի վեր է որ անգործ էք, արդեօք տան մէջ բանի մը պէտք չունի՞ք»:

Այս ծանր եկաւ ամուսինիս որ փղձկելով պատմեց թէ ո՛չ դրամ ո՛չ ալ հաց ունէինք:

Ասոր վրայ բարեկամը զայն իր տունը կ'առաջնորդէ, եւ մեր աղօթքին վրայ դեռ մէկ ժամ չանցած, ան կը վերադառնար խոշոր զամբիւղ մը պաշարով: Ամենէն վրան խոշոր հաց մը դրուած էր: Այս եղաւ Ատային աչքին զարնող առաջին բանը որ աղաղակեց,

«Մայրիկ, մայրիկ, Աստուծոյ հացը չէ կտրել, տես, լման հաց մը զրկած է մեզի . . . »:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN, 39, Rue St.-Savournin - Marseille